

Հ.Յ.Դ.ի ներկայացուցիչը մասնակցեցաւ Նիւ Եորքի մէջ կայացած Ընկերվար Միջազգայնականի նախագահութեան ժողովին

**Ընկերվար Միջազգայնականի մէջ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան
ներկայացուցիչ
ընկ. Մարիա Թիթիգեան,
Ելոյթ ունեցած է
Նախագահող խորհուրդի նիստի ընթացքին,
Կովկասեան տարածաշրջանի տագնապի մասին խօսելով ու յատկապէս
անդրադառնալով հարցի յառաջիկայ հանգրուաններուն
եւ հեռանկարներուն**

ՄԱԿի 63րդ նստաշրջանի կայացման առիթով, Նիւ Եորքի մէջ գումարուեցաւ Ընկերվար Միջազգայնականի նախագահող խորհուրդի նիստը: Պետք է նշել, թէ Ընկերվար Միջազգայնականը խորհրդատուի դերով պաշտօնական մասնակցութիւն կը բերէ ՄԱԿի նստաշրջաններու ընթացքին:

Ընկերվար Միջազգայնականի մէջ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան ներկայացուցիչ ընկ. Մարիա Թիթիգեան՝ ընտրուած է հեղինակաւոր այս կազմակերպութեան նախագահութեան կազմին մէջ, որ կը բաղկանայ նախագահ Եորղոս Փափանտրեուի, ընդհանուր քարտուղար Լուիս Այալայի եւ 13 փոխ նախագահներու կազմէ մը, որոնց կարգին կառավարութիւններու եւ երկիրներու ղեկավարներ, ինչպէս Չիլէի նախագահ Միշել Պաչեթեթ, Իրաքի նախագահ Ճալալ Թալապանի, Աւստրիոյ վարչապետ Ալֆրետ Կուսենպաուըր:

Խորհուրդի ժողովին հրաւիրուած էին նաեւ Ֆինլանտայի նախագահ Թարիա Հալոնեն, Փանամայի նախագահ Մարթին Թորիխոս, Սերպիոյ նախագահ Պորիս Թանթիչ եւ Մոնկոլիայի վարչապետ Սանճաճին Պայար:

Չրոյցներու նիւթ դարձաւ տնտեսական տագնապի երեւոյթը եւ ապագայի մտահոգիչ հանգրուանները, ինչ որ մղեց ԸՄ-ի նախագահութիւնը շեշտելու՝ մաքուր եւ թափանցիկ տնտեսական օրինակարգի եւ կանոններու գոյութեան անհրաժեշտութիւնը: Այլ հարցեր եւս քննարկուեցան, ինչպէս Հայթի հարուածած մրրիկներու աղէտի հետեւանքները, Սերպիոյ մէջ տիրող քաղաքական իրավիճակը, ԱՄՆի ընտրութիւնները:

Ընկերվար Միջազգայնականի մէջ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան ներկայացուցիչ ընկ. Մարիա Թիթիգեան, Ելոյթ ունեցած է նախագահող խորհուրդի նիստի ընթացքին, Կովկասեան տարածաշրջանի տագնապի մասին խօսելով ու յատկապէս անդրադառնալով յառաջիկայ հանգրուաններուն:

Նկարին մէջ ձախեն աջ՝ Միշել Պաչեթեթ, Լուիս Այալա, Եորղոս Փափանտրեու, Թարիա Հալոնեն